ԱՍՊԻՐԱՆՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 12002 / /10-6

ք. Երևան «30» հունվարի 2026 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտոր Ա. Գրիգորյանի,որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում)՝ 1111 «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր» ծրագրի 12002 «Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 1111 «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր» ծրագրի 12002 «Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում» միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) շրջանակներում իրականացնել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի արտադրությունից կտրված **17** ասպիրանտների համար հաշվարկված կրթաթոշակի տրամադրում՝ ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 29-ի N 1403-Ն որոշմամբ սահմանված չափերով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրի գինը կազմում է **11,220,000** (**տասնմեկ միլիոն երկու հարյուր քսան հազար**) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.3. Պատվիրատուին իրավունք է վերապահվում պայմանագրով ամրագրված գումարի չափը փոփոխել՝ ավելացնել կամ նվազեցնել: Այդ դեպքում կողմերի միջև ստորագրվում է գրավոր համաձայնագիր:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է պայմանագրով նախատեսված միջոցառման իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները վերադարձնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի դեկտեմբերի 18-ը:

3.4 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

3.5 Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանգիրը ուժի մեջ է ստորագրման պահից:

5.2 Սույն պայմանագրում և նրա անբաժանելի մասը կազմող հավելվածում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ: Կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	**Կ ա տ ա ր ո ղ**
ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե	«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Օրբելի եղբայրների 22	ք.Երևան, Նալբանդյան 128
Հ/Հ 900011048221	Հ/Հ 900018001876
ՀՎՀՀ 02704199	ՀՎՀՀ 01503224
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Ռեկտոր՝
Կ. Ղարիբյան	Ա.Գրիգորյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ